Հասցե՝ Արտաշիսյան 46/1, Երևան 0039
հեռ.՝ 010303010
mc@astvatsamayr.am

"SOURB ASTVATSAMAYR"

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ»
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
1982

Medical Centre JSC

№ ԱՀ-259
17.05 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Լինարե մեդ» ՍՊԸ-ի միջև 2024թ փետրվարի 02-ին կնքվել է Ն ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/10-10 ծածկագրով բժշկական նշանակության ապրանքների մատակարարման պայմանագիր:

Հիմք ընդունելով ՀՀ պետական վերահսկողական ծառայության 29.04.2024թ N Ե1050-24 գրությունը, ինչպես նաև առաջնորդվելով կնքված պայմանագրի 8.3 կետով, այն է "Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:" «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն

առաջարկել է լուծել N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/10-10 ծածկագրով բժշկական նշանակության ապրանքների մատակարարման պայմանագիր: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի հ.526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով 2024 թվականի մայիսի 6-ի N ՍԱ-233 գրությամբ «Լինարե մեդ» ՍՊԸ-ն հայտով նշված linare50@mail.ru էլեկտրոնային հասցեին ծանուցվել է NՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/10-10 ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծման մասին և վերջինիս մասին հայտարարությունը 2024 թվականի մայիսի 6-ին հրապարակվել է https://gnumner.minfin.am/ կայքում:

Հիմք ընդունելով, որ «Լինարե մեդ» ՍՊԸ-ի կողմից մինչև գրությամբ սահմանված 16. 05. 2024թ չի վճարվել պայմանագրի կատարման և որակավորման ապահովումները, «Լինարե մեդ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի տնօրեն՝ Հ. Զոհրաբյան